№ 65 ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 24 — 1902 — ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 24 № 65

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց։ Մատենագրութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ցիշողութիւններ եւ տպաւորութիւններ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Անցեալ փետրվար ամսին Էջմիածնում վախճանվեց մի թիւրքահայ պանդուխտ։ Շատերն գիտէին նրան ճանաչում. բայց եւ այդպէս, նա մեռաւ, ինչպէս մեռնում է ամէն մի պանդուխտ. մենակ, զրկված մխիթարութիւնից, անտէր ու անտիրական։

Սա ճակատագիր է։ Այդպիսի հանգամանքների մէջ մեռնելը միայն Յովսէփ Ճանիկեանին չէր վիճակված։ Միլիոններ են նրա նման վերջին չունչ արձակել օտար երկնքի տակ։ Միլիոններ... Վերցրէք դարերի մի երկար, արիւնոտ շարք, դուք կը տեսնէք հային այդպէս մեռնելիս ամէն տեղ, աշխարհի բոլոր կողմերում։ Ո՞ւր չը կայ հայի գերեզման։ Ո՞ւր չէ հայը փակել իր աչքերը, շրջապատված օտար, անտարբեր մարդկանցով։

Այո, այդպէս մեռնելը հայի պատմական ճակատագիրն է։ Եւ Յովսէփ Ճանիկեանը միլիոններից մէկն էր։ Դուցէ կարծէք, թէ նրա վիճակը դան է այն պատճառով, որ նա այդպէս մոռացված ու կորած վախճանվեց Էջմիածնում, ամենայն հայոց մայր աթոռում։ Ցիշում էք «Մշակի» մէջ տպված նկարագրութիւնը. մի մարդու ուղեկցութեամբ գիւղի քահանան տանում է զարիբին, թաղում է հասարակաց գերեզմանատան մի մոռացված անկիւնում, «զարիբանոցում»։ Բայց սա էլ զարմանալի չէ. մենք եւ դուք, ընթերցող, ի հարկէ չենք մոռացել Ռաֆֆիի «Խենթի» վերջին կտորները։

Եւ ինձ այստեղ այդ հարցը չէ հետաքրքրում։ Պանդուխտը մեռնում է, չունենալով իր մօտ մի կաթիլից բարեկամ. պանդուխտը գերեզմանատուն է տանվում «աղբի սայլով»։ Այս բոլորը զարմանալի չէ, որովհետեւ նա պանդուխտ է։ Մտաբերեցէք, թէ մեր ժողովրդի լեզուում ինչ անուններ ունի ստացած «զարիբը»։ Եւ վերջապէս, մի՞թէ մի եւ նոյն չէ ինչպէս թաղվել։ Դրութիւնը մազի չափ չէր փոխվի, եթէ Յովսէփ Ճանիկեանին գերեզմանատուն տանէին 10—20 հոգի։ Կայ, ի հարկէ, վերաբերմունքի հարց. կայ այն հարցը, թէ կենդանի մարդը ինչպէս է վերաբերվում իր եղբօրը, իր հարազատին։ Բայց ես այստեղ այդ հարցով չեմ զբաղվում։ Ինձ հետաքրքրում է ինքը, այդ «զարիբը»։

Ճանիկեանին ես շատ լաւ էի ճանաչում, տարիներից ի վեր։ Հասարակաց ուշադրութեան արժանի կենսագրութիւն չունի նա։ Մի թիւրքահայ, որ չէր կարողանում վերադառնալ իր սիրած հայրենիքը—ահա ինչ էր նա։ Այստեղ, մեր մէջ, ապրում էր նա, միշտ ուշքն ու միտքը դարձրած դէպի իր հայրենի Ակն քաղաքը։ Զարմանալի է, թէ ինչպէս յաճախ անհատները ներկայացնում են իրանց ժողովրդի վիճակը։ Յովսէփ Ճանիկեանը մեր աչքի առջեւ թիւրքահայ ժողովուրդն էր։ Ահա այդ պատճառով է, որ ես այսօր խօսում եմ նրա մասին։

Մի խեղճ, բարի մարդ էր նա։ Համեստ, գլուխը կախ, նայում էր աշխարհին, տեսնում էր բարիքները եւ ինքն էլ ցանկանում էր նրանց մասնակից լինել։ Միամիտ էր այդ մարդը. չարքաշ, դառնութիւններով լի կեանքը նրան հարկադրում էր տանջվել, բայց յուսահատվել—երբէք։

Ոչինչ չունէր նա։ Իսկապէս նրա համար էր ասված՝ մի մարդ, որ գլուխ դնելու տեղ չունի։ Բայց տանջանքները, յուսախաբութիւններով, պատրանքներով լի կեանքը նրան չէր տապալում։ Ապրելու միջոցներից զուրկ, նա քարշ էր տալիս մի խղճուկ գոյութիւն, բայց պատով էր պահում իրան. երբէք հացի խընդիրը չը հարկադրեց մոռանալ իր մարդկային արժանաւորութիւնը։ Հագնում էր ցնցոտիներ, ճաշում էր մուրացկանի պէս, ապրում էր սարսափելի վատ պայմանների մէջ, բայց երբէք չէր շահագործում իր դժբաղդութիւնը, երբէք ցոյց չէր հանում նրան եւ չէր պահանջում, որ իր համար աւելի տանելի պայմաններ ստեղծվեն։

Եւ այդ ճիրված, տխուր կեանքի մէջ նա որքան նեցուկներ էր գտնում իր գոյութիւնը պահպանելու համար. 1895—1896 սարսափելի թուականներին նա յաճախ հանդիպում էր ինձ։ Խօսքը, ի հարկէ, այն ահռելի դէպքերի մասին էր լինում, որոնք կատարվում էին նրա դրժբաղդ հայրենիքում։ Ի՞նչ խօսք կարող էր լինել։ Նա էլ, ես էլ գիտէինք ինչ է պատահել, կարդացել էինք հէնց նրա հայրենի Ակնի զարհուրելի կործանման պատմութիւնը։ Ինչեր էին անցնում այդ միջոցին այդ մարդու սրտով. չէ՞ որ մի մարդ էր դա, որ ունէր այն սպանդանոցում տուն, տեղ, ընտանիք, ազգականներ, յիշատակներ։ Ես փորձում էի մխիթարել նրան, բայց ինքս էլ չէի հաւատում իմ խօսքերին. մի տեսակ վայրենի, անհասկանալի բան էր թւում այդպիսի մարդուն մխիթարելը։ Մխիթարել. բայց ո՞ւմ, ինչ հանգամանքների մէջ։ Պէտք է գտնել գոնէ մի հատիկ հանգամանք, որ կարողանար սիրտ տալ, մորմոք պակասեցնել։ Իսկ ես չէի գտնում։ Եւ ո՞վ կարող էր գտնել։

Ահա այդպիսի հանդիպումների, այդպիսի ամենայն, պաշտօնական մխիթարանքների ժամանակ ես զարմացել եմ շատ ու շատ անգամ եւ հասկացել եմ, թէ ինչն է այն հրաշագործ ոյժը, որ պահում է նրա ներկայացրած ժողովուրդը հայրենի դժոխքում։

Ի՞նչ ոյժ էր դա։

Մինչդեռ ամենքը յուսահատված էին, մինչդեռ խաւար ու մութ էր տիրած ամենքի սրտում, նա, այդ տանջված «զարիբը» գտնում էր միջոց ապրելու, յուսալու։ Նրա բազմաչարչար դէմքի վրա երբեմն նոյն իսկ ժպիտներ էին երեւում։ Ո՞րտեղից էին դրանք։—Խեղճը կարդացել էր լրագրում, թէ այս ինչ տեղում համակրանքով են խօսել իր հայրենակիցների մասին, թէ այս ինչ հրապարակախօսը այսպիսի խիստ խօսքերով է դատապարտել գաղանութիւնները։ Տխուր իրականութեան մէջ հազարաւոր փաստեր ցոյց էին տալիս, որ դրանից ոչինչ չի դուրս գայ, որ խօսողը խօսում է, իսկ մորթողը մորթում է։ Բայց մեր պանդուխտը այդպէս չէր։ Նա ուզում էր հաւատալ, նրան պէտք էր հաւատ եւ նա հաւատում էր։ Հաւատում էր, որ արիւնով ներկված աշխարհը չի մոռացվի։ Հաւատում էր, որ արիւնը զուր չի կորչի...

Օ՜, որքան մեծ է այդ հաւատը, դժբախտների հաւատը։ Որքան անսպառ համբերութիւն է նա տալիս։ Ճանիկեանը ապրում էր այստեղ, ինչպէս կարող է ապրել մի խեղճ, անգործ պանդուխտը։ Նա տանջվում էր, բայց եւ սպասում։ Սպասում էր չը շտապելով։ Ստրուկի համբերութիւն էր դա, անհատնում, մշտական, անսպառ։ Հարուածները թափվում էին իրար ետեւից. մութը խտանում էր օր օրի վրա եւ նրա մէջ կարող էին կորչել ամէն մի յուսատու ճառագայթ, ամէն մի լոյսի նշոյլ։ Բայց հայրենիքից տարագիր, հայրենիքի ցաւերով տոչորվող խեղճ, անկարող, վիզ ճկած մարդը շարունակում էր որոնել ճառագայթներ, եւ երբէք չէր ասում իրան, թէ չը պիտի գտնէ այդ չողերից գոնէ մէկը, գոնէ ամենաչնչինը...

Ահա այսպէս էի ես հասկանում այդ կեանքի գաղտնիքը։ Ի՞նչպէս է նա պահվում։ Ի՞նչպէս է, որ նա չէ կտրվում, չէ խորտակվում։ Որովհետեւ յոյս ունի նա, որովհետեւ ակնկալութիւնը նրան թելադրում է, թէ խոնարհ, բարի, լաւ ձգտումներով լցված կեանքը պիտի պահվի, չը պիտի կորչէ։

Անցան տարիներ։ Բայց մարմինն ունի իր պահանջները. նա չէ կարող դիմանալ զրկանքներին անվերջ ու անդադար։ Յովսէփ Ճանիկեանը արհամարհում էր բոլոր դառնութիւնները, ոչնչի տեղ էր դնում բոլոր զրկանքները։ Ոչինչ միջոց չունէր նա իրան պահպանելու համար, իրան շրջապատող անտարբերութեան, սպանիչ հանգամանքների դէմ կռուելու համար։ Ի՞նչ ունէր իր ձեռքում։ Միայն մի բան. եւ այդ բանն այն է, որ մենք անուանում ենք ճակատի զօռով ապրել։ Ցամաքութեամբ, ապշեցնող անփութութեամբ դէմ դնել մարմինը հարուածներին, կամենալ ապրել ինչպէս որ լինի, ինչ հանգամանքներում էլ լինի եւ յոյս ունենալ, թէ կարելի է ապրել այդպէս, կարելի է մի կերպ դուրս գալ դժոխային պայմաններից, լաւ օր տեսնել, ուրախանալ—ահա այդ մարդկանց միակ զէնքը, միակ կարողութիւնը այս աշխարհում։

Բայց աշխարհը, աւաղ, իրն է պահանջում, իր օրէնքներն ունի։ Եւ ես տեսնում էի վերջին երկու տարում Ճանիկեանին։ Նա հալվում, մաշվում էր արագ։ Անցեալ տարի նա կաթուածահար էր եղել. մէջքից կորացած, նիհար եւ անոյժ մի կմախք էր դա։ չէր կարողանում խօսել, յոգնում էր արագ։ Բայց եւ այդպէս ոչ մի խօսք մահվան մասին։ Նրա աչքերը փայլում էին հետաքրքրութիւնից եւ յոյսից, երբ պատմում էիք նրան որ եւ է խրախուսական բան։ Նրան դարձեալ վայելչութիւն էր պատճառում իւրաքանչիւր մի աչքի ընկնող երեւոյթ մեր գրականութեան մէջ, իւրաքանչիւր մի լաւ գրուածք, առաջադիմական մի նշոյլ։ Աւերակ էր այդ կեանքը. բայց աւերակի մէջ դեռ ես պլպլում էր կեանքի կրակը։

Այդպէս էլ նա գնաց մինչեւ գերեզման։ Եւ ես հաւատացած եմ, որ Ղազարապատի անշուք մի սենեակում, հոգեվարքի մէջ էլ, մենակ ու մոռացված ամենքից, նա դարձեալ կրում էր իր մէջ այն, ինչ երբէք չէր հեռացել նրանից—յոյս։ Յոյս նոյն իսկ մահվան փոսի մէջ, յոյս կրծքի խորտակված, ջարդ ու փշուր դարձած տախտակի տակ...

ՏԱՆՏԷՐԸ հրաւիրեց ներս, ուր պատշգամբում աշխատում էր եւ թէյ խմում իր ամուսնու հետ։

Մինչդեռ ես տիկին Արծրունու հետ խօսում էի ընդհանուր ծանօթների մասին, Գրիգոր Արծրունին վերջացրեց իր գրութիւնը, որ հերթական ֆելիեետօն էր։ Տարիքով ընթերցողս անշուշտ լաւ յիշում է այդ ֆելիեետօնները, որոնք կատարեալ գրական անցքեր էին կազմում այն ժամանակ. շատ դարձուածքներ, ֆելիեետօնները հրատարակվելուց յետոյ, երկար ժամանակ անցնում էին բերանից բերան, դառնալով ռուսների ասած՝ «крылатыя слова»։ Տեղակալական հարցի յարուցած պօլէմիկայի թունդ միջոցն էր, եւ մեր եզուիտները—շատ գարուններ բացվեցին այդ օրերից, շատ կրքեր սառան, բայց մտաբերելով այդ ժամանակները ակամայից գործ ես ածում խիստ դարձուածներ՝ այնքան թարմ է տպաւորութիւնը,—մեր եզուիտները, ասում եմ, զօրակված quasi-քաղաքական պատճառաբանութիւններով, որ ընթերցողը պիտի կարդար տողերի միջեւ, աշխատում էին աւելի շանսեր ձեռք բերել առաջիկայ կաթողիկոսական ընտրութիւններին։ Հարցի լուծմանը մեր պահպանողականները առաջ քաշեցին եւ աստուածաբանական (?) գիտութիւնը, եւ ս. գիրքը՝ Առաքեալների Թղթերը,—օվքեր, նրանք, որոնց համար աստուածաբանութիւնը մի պատրուակ էր, որոնք Թիֆլիսեան ամարային տօթ երեկոները զուարճանում էին Պուշկինեան թատրոնում օպերետային երգուհիների ոչ «պատուց» կուպլետներով, regardez ici, regardez là, իսկ միւս օրը լուրջ ձեւով յօդուածներ էին բերում Պօղոս Առաքեալի Թղթերից, իբր ապացոյց իրանց հաստատածի։ Ահա այդ տարտիւֆներին էր նուիրված ֆելիեետօնը, որ մենք իսկոյն լսեցինք մեծ հաճութեամբ։ Իզուր էր սիկին Արծրունին աղաչում ամուսնուն դէն ձգել ֆելիեետօնից մի աւելի պիկանտ կտոր։ «Ընտանիքի տէր մարդիկ են, թող այդ regardez là կտորը, Գրիգոր», ասաց նա։ Բայց Արծրունին չը զիջեց եւ գրուածքը անփոփոխ գնաց մամուլի տակ։

Գրական զանազան հարցերից մեր խօսակցութիւնը չը գիտեմ ինչպէս անցաւ մի օրաթերթի խմբագրի հիւանդութեան. այդ խմբագրի թերթը, պիտի ասել, նոյն իսկ արգելված էր բերել «Մշակի» խմբագրութիւնը։ Ճշմարիտն ասած, ես շատ զարմացայ, թէ որքան քրիստոնէական ոգով Արծրունին ցաւում էր այդ հիւանդութեան վրա—ճիշդ է, ընտանիքի տեսակէտից եւ ինչ սիրով յիշեց այն բարերարի անունը, որ միջոց էր տուել արտասահման գնալ հիւանդին բժշկվելու համար։ Ակամայից յիշում ես նոյն օրերին այդ խմբագրի կեղտոտ ակնարկները, լիրբ յարձակումները Տեղակալի եւ Սեդրակեանի վրա՝ Միաբանին Պարիզ բժշկութեան ուղարկելու առիթով։ Ի՞նչ տարբերութիւն։

Խօսակցութիւններս անցան եւ հայ-վրացական յարաբերութիւններին։ Ամենքը գիտեն «Մշակի» վերաբերմունքը այդ խնդրին. լաւ յիշում են եւ Գ. Ծերեթելու ողբը Արծրունու թաղման ժամանակ։ Բայց մտերիմ խօսակցութեան մէջ ես առիթ ունեցայ լսել շատ դառն կարծիքներ վրաց ինտելիգենցիայի պարագլուխների մասին։ Դժբաղդաբար, ինձանից անկախ պատճառներով (տես «Մշակ» № 19, 1901 թ.) ես չեմ կարող կանգնել այս կէտի վրա։ Յետոյ ես շատ անգամ առիթ ունեցայ յիշել Արծրունու մարգարէութիւնը, երբ պատուվեց Ճավճավաձէների, Նիկոլաձէների դիմակը տխուր ասպետ Վելիչկոյի օրերով...

Ասում են, Արծրունին կրքոտ, անհամբեր բնաւորութիւն ունէր։ Ես դատել չեմ կարող—շատ կարճատեւ էր իմ ծանօթութիւնս, որ անձնական կարծիք յայտնեմ։ Բայց նրա բնաւորութեան մի գեղեցիկ գծի հետ ես ծանօթանալու առիթ ունեցայ։ Մեզ մօտ շատ էլ զարգացած չէ «ցերեմոնիա» ասած բանը։ Ժամանակ թէ անժամանակ խմբագրատուն էին մտնում զանազան կարգի եւ տեսակի մարդիկ, մանաւանդ պանդուխտ թիւրքահայեր։ Մէկին հարկաւոր էր դրամական օգնութիւն, միւսը խնդրում էր տեղ գտնել, երրորդին յանձնարարական նամակ էր հարկաւոր այս կամ այն պարոնի հասցէին, չորրորդի համար յայտարարութիւն տպել, որ «Մշակը» միշտ ձրի էր կատարում։ Չէ կարելի ասել, որ թիւրքահայ եղբայրները լակօնիկ ոճի տէր լինեն. եւ ինչ հրեշտակային համբերութեամբ այդ «կրքոտ» ասվածը լսում էր նրանց չատախօսութիւնը, տալիս հարկաւոր բացատրութիւնը,

Ես չեմ ասում, ընթերցող, թէ Յովսէփ Ճանիկեանը մի որ եւ է արտակարգ երեւոյթ էր, որ եւ է առանձին որոշ գծագրված դէմք էր։ Ընդհակառակն, ես համոզված եմ, որ նրա պէս հազարներն են ցրված այս ու այն կողմ, մեռել են, մեռնում են կամ պիտի մեռնեն։ Ես միայն նրան էի լաւ ճանաչում, ես միայն իմ այդ ծանօթի մէջ էի տեսնում մի ամբողջ ժողովրդի, նրա հայրենակից ժողովրդի, պատկերը, կեանքի գաղտնիքը, ճակատագիրը։ Այդ պատճառով էլ նրան եմ ձեզ ներկայացնում, սոսնայն յօժարութեամբ խոստովանելով, որ շատ շատերը նրա նման ներկայացնում են տառապող, ճնշված, բայց յոյսով ու անսպառ համբերութեամբ ապրող մի ժողովուրդ։

Քաղցր խօսքով յիշենք այդ խեղճ, հալումաշ դարձած պանդուխտներին։ Դրանով մենք յիշած կը լինենք եւ այն ժողովուրդը, որ այդպիսի նահատակներ է ուղարկում աշխարհի չորս կողմը տանջվելու, յուսով ապրելու եւ յուսով էլ կորած ու մոռացված գերեզմաններ մտնելու համար։

Լ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. Պուշկին. „Յաւերժահարսը“ (պօէմա). Թարգմ. Կոստանդին Կրասիլնիկեան. 40 երես գինն է 15 կոպէկ, Թիֆլիս 1902 թ.

«Յաւերժահարսը» (Русалка) Պուշկինի ամենագողտրիկ երկերից մէկն է, որի մէջ ջրաներկ պատկերները յիշեցնող ոճով նկարագրված է խաբված աղջկայ վիշտը։

Պօէմայի հերոսուհին, յաւերժահարսը, կարծէք լուսնի շողքերից հիւսված լինի։ Առաջ նա մի հասարակ աղջիկ էր, ջաղացպանի աղջիկ։ Նա չքաւոր էր ու գեղեցիկ, ուրեմն առաջուց նախասահմանված՝ զոհ լինելու հզօր կամ հարուստ տղամարդկանց։ Վաղուց յայտնի է, որ գեղեցկութիւնը միայն սեւ օր է բերում չքաւոր կանանց։ Նայելով տեղին եւ ժամանակին, նրանց միջով գնում են գերեվճառանոցում, քաշում են հարեմը կամ հրապուրում են ու դարձնում թանգագին կամ էժանագին «կենդանի ապրանք», եթէ սեւ բախտի տէր աղջիկը չէ կարողանում կամ չէ ուզում թաղել իր ամօթը մի որ եւ է գեռի ալիքներում։

Պուշկինի հերոսուհին, որի որդանդում արդէն խաղում է իր մեղքի արդիւնքը եւ որին ձգում է իր սիրած իշխանը, այդ միջոցին է դիմում եւ յաւերժահարս է դառնում։

Ջրային յաւերժահարսները,—«հրեղէն կուսանքը», ինչպէս անուանում է նրանց Բաֆֆին «Կայծերում», երեւի վերցնելով այդ անունը ժողովրդից,—հրապուրում են մարդկանց դէպի գետը, թովում են նրանց եւ նրանք ջուրն են գցում իրանց։ Պուշկինի յաւերժահարսը վճռում է այդ միջոցով վրէժ հանել իշխանից, որ խաղալիք դարձրեց նրա կուսութիւնը եւ թողնելով նրան ամուսնացաւ մի իշխանազն օրիորդի հետ։ Պօէման չէ վերջացրած, բայց պարզ է, որ իշխանը խեղդվելու է նոյն ալիքներում, որտեղ գերեզման է գտել ջաղացպանի աղջիկը։ Այդ է պահանջում ժողովրդական հաւատալիքը, այդ է պահանջում բանաստեղծութեան տրամաբանութիւնը եւ, պէտք է արդեօք ասել, արդարութիւնը, որ, դժբախտաբար յաղթանակում է յաճախ միմիայն բանաստեղծների երեւակայութեան մէջ։

Պէտք է ենթադրել, որ Պուշկինի «Յաւերժահարսը» բազմաթիւ ընթերցողներ կը գտնի հայ կանանց շրջանում։ Ինչքան էլ բարձր գաղափար ունենանք հայ կնոջ ողջախոհութեան մասին, անվիճելի է, որ մեզնում էլ պատահում են եւ,—չնորհիւ չար ու բարիով լի քաղաքակրթութեան տարածման,—հետզհետէ աւելի ու աւելի յաճախ են պատահելու կոյսերի անկման դէպքեր։ Հայ կինը արդէն դուրս է եկել այն շրջանից, երբ նա ապրում էր միմիայն իր անձնական կամ ընտանեկան կեանքի սահմանափակ չափերով։ Նա արդէն ընդունակ է զգալ այն ստրկական լուծի ծանրութիւնը, որ տղամարդիկ դարերից ի վեր դրել են նրա վզին։ Ամեն մի ճնշում, ամեն մի ստորացում, որին ենթարկվում է կինը միմիայն այն պատճառով, որ նա կին է, չէ կարող վչտի եւ զայրոյթի արձագանք չը զարթեցնել զոհի՝ դժբախտութեան քոյրերի մէջ, որոնք չեն կարող չը հասկանալ, որ ամեն անգամ, երբ փողով գնվում է կամ բռնաբարվում է մի կուսական պատիւ, ոտնատակ է տրվում բոլոր կանանց պատիւը։

Պուշկինի պօէման, պէտք է յուսալ, բազմաթիւ ընթերցողներ կը գտնի մեր մէջ նաեւ այն պատճառով, որ թարգմանութիւնը անպայման աջող է կատարված. պ. Կրասիլնիկեան աշխատել է թարգմանութեան մէջ բաց չը թողնել գրեթէ ոչ մի բառ բնագրից եւ չաւելացնել գրեթէ ոչ մի կէտ, եւ չը նայելով դրան նա կարողացել է թարգմանել անբռնազբօսիկ ոտանաւորով եւ հայ լեզուի ոգուն հարազատ ոճով։ Պուշկինի ոտանաւորի բիւրեղային յստակութիւնը եւ սքանչելի գեղեցկութիւնը նա չէ կարողացել վերարտադրել, բայց թարգմանութիւնը ներշնչում է,—ի հարկէ, մի փոքր թոյլ ասեմ՝ նոյն տրամադրութիւնը, ինչ որ բնագիրը, իսկ այդ՝ ամենագլխաւոր բանն է գեղարուեստական գրուածքների թարգմանութեան մէջ։

Ասացի, որ թարգմանութիւնը կատարված է լաւ լեզուով եւ մանրակրկիտ հաւատարմութեամբ, սակայն, այն էլ պէտք է ասել, որ նա ազատ չէ անաջող դարձուածքներից. օրինակ, «Հարսնացուն, որին (որով) ինձ փոխարինեց».—«Կարմիր ջահէլութիւն» (красная юность), եւ նոյն իսկ սխալներից, օրինակ, пока женихъ—ужъ онъ не насидится=«Երբ փեսացու է—նա ամենեւին տեղը չի նստի» (ընդհակառակը, не насидится կը նշանակի՝ տեղից չէ ուզում վեր կենալ, կողքս կտրած նստում է, նստելուց չէ կշտանում), сватъ=խնամի (թէեւ сватъ կը նշանակի նաեւ խնամի, բայց այդտեղ գործ է ածված խնամախօսի մտքով), сваха=խնամի (сваха երբէք չէ գործածվում խնամի բառի մտքով. կին խնամուն ռուսերէն ասում են сватья, իսկ сваха նշանակում է խնամախօս, մօթիքուլ), вечоръ=մի օր (մի ուրիշ տեղ էլ թարգմանուած է «այս երեկոյեան», մինչդեռ вечоръ կը նշանակի երէկ, երէկ երեկոյեան)։

Տ. Ց.

չեմ ասում դրամական օգնութեան մասին, որ անում էր վերջերս իր սուղ միջոցներից։ Մի օր խմբագրութիւն մտաւ իմ ներկայութեամբ տրապիզօնցի մի պանդուխտ. նրա չատախօսութեան վերջ չը կար։ Արծրունին կարգադրեց տպել նրա յայտարարութիւնը, բայց պանդուխտը չէր էլ ուզում փակել իր չատախօսութեան չարունակը։ Ես բօպէից բօպի սպասում էի, թէ ահա կը հատնի Արծրունու համբերութիւնը, բայց իզուր։ Վերջը, երբ իմ նկատողութիւնս նրան յայտնեցի, նա բարի ժպիտը չրթունքին ասաց. «Ղարիբի սիրտը առանց այդ էլ կոտրած է»։ Ա՜խ, նա չատ էր սիրում իրաւ այդ ղարիբին, նրա հողը եւ ջուրը *), գուցէ մի քիչ բօմանտիկ սիրով։ Երազի օրեր։

Ահա մտնում է խմբագրատուն Միխիթարեան կաթոլիկ վարդապետը։ Ճանապարհորդում է Կովկասում եւ եկել է այցելելու անուանի հրապարակախօսին, որին հեռուից սիրում, յարգում է։ Արծրունին դէպքից օգտվում է եւ նրա առաջ արծարծում իր վերջերս փայփայած միտքը՝ արտասահմանում հայ բարձր ուսումնարան—համալսարան հիմնելու գաղափարը... «Տարածեցէք, արծարծեցէք այս միտքը»։

Մի, գուցէ եւ աւելորդ նկատողութիւն էլ։ Յայտնի է, որ մենք՝ տղամարդիկս որքան անզուսպ ենք մեր խօսակցութեան ժամանակ։—Ես քանի օր մի անհամեստ խօսք չը լսեցի Արծրունու բերանից. մի անգամ պատմում էր, որ տիկինը Երեւան հերանց գնալով, նա բաւական տաղտկալի ժամանակ էր անցկացնում։ «Շնորհակալ եմ, որ ծանօթ տիկիններ եւ օրիորդներ յաճախում են, զուարճացնում մուզիկայով, երգով» եւ դառնալով իմ կողմը, ժըպիտը բերանին աւելացրեց. «ախար գիտեն, որ ես անվնաս մարդ եմ»։ Անսովոր թեւաց այդ դարձուածքը Արծրունու բերանում, եւ իմ այդ ենթադրութիւնը յետոյ պարզեց նրա մօտիկ բարեկամ պ. Ց. Տէր-Մարկոսեանը. դա մի տեսակ զիջում էր իմ երիտասարդութեան։

Ամեն մի քայլից նկատելի էր, որ այդ ուսումով եւրոպացի մարդը անձնատուր էր միայն եւ միայն իր սիրած գործին։ Մտաւոր հարցերից դուրս նա ինտերես չունէր. հայ կեանքը այդ հարցերի մէջ առաջին տեղն էր բռնում, այնքան լուրջ էր նայում նա իր կոչման։ Ակամայից յիշում ես հրաբորբոք Կարլէյլի «հերոսները»։ Այո՛, նա մեր նոր կեանքի հերոս մարգարէն էր, մեր Մովսէսը, եւ երկար կը սպասէ մեր աղքատիկ կեանքը, գրականութիւնը մի այդպիսի հերոսի։ Բանը միայն տաղանդի մէջ չէ, բանը այն սուրբ զգացմունքի մէջ է, որ տածում է ճշմարիտ հերոսը դէպի իր գործունէութիւնը, լինի դա Մուհամէդ թէ Բեօրնս, Բուսսօ թէ Տօլստոյ։

Ես ինձ բաղդաւոր եմ համարում, որ Արծրունու հետ ծանօթացայ այդ ժամանակ։ Նա գտնվում էր իր տաղանդի գագաթնակէտի վրա, վերջին ճանապարհորդութիւնները եւ կեանքը Եւրոպայում, Երեւանեան նահանգի այցելութիւնը—մինչ այդ Արծրունին չէր տեսել հայկական գաւառներ—չատ լայնացրել էին նրա մտաւոր հորիզոնը։ Ինչ կարծիքի էլ լինեն մեր գիտուն լեզուագէտները, ըստ իս երբէք մեր հրապարակախօսական լեզուն չէր հասել այն լակոնականութեան, պարզութեան եւ ոյժին, ինչպէս են Արծրունու վերջին գրուածքները...

II

1892 թ. դեկտեմբերի կարծեմ 21 էր, երբ ես մասնաւոր գործերով Պետերբուրգից ուղեւորվում էի Կովկաս։ Օրը դուրս էր։ Առաւօտեան մնաս բարեւ ասելով ընկեր բարեկամներս, ես մտայ վագոն եւ ձեռքս վերցրի օրվայ լրագիրները։ Առաջին հեռագիրը, որ «Новости»-ում աչքիս ընկաւ, անկարագրելի ցնցում առաջ բերեց իմ մէջ, արտասունքը հեղեղի նման թափ տուեց աչքերիցս եւ պատճառն իմանալու ցանկացող մտերիմիս միայն կարողացայ պարզել լրագիրը։

Կէս ճանապարհին, կարծեմ Ամերում, իշայ հեռագրելու «Մշակի» խմբագրութեանը, բայց արտասուքը թափվում էր թղթի վրա, աչքերս չէին տեսնում թուղթը... իզուր աշխատանք. «Третій звонокъ въ Москву» գոչումը յիշեցրեց ինձ իրականու Դիւնը եւ ես մտայ վագոն։

Մոսկվա հասնելով անկարող էի չարունակել ճանապարհը, գնացի ծանօթ ուսանողների մօտ Երեւան նուիրեցինք Արծրունու յիշատակին։

Հասնելով Վլադիկավկազ, ես հանդիպեցի նախորդ արգելքի. ճանապարհները փակ էին, իսկ միւս օրը պիտի հողին յանձնէին թանգագին հրապարակախօսին։ Ի՞նչ արած, պէտք է հպատակվել։ Միւս օր առաւօտը գնացի որոնելու հայոց ուսումնարանը, որտեղ ինձ ասացին թէ եկեղեցում հոգեհանգիստ պիտի կատարվի։ Գնացի եկեղեցի. մտայ մի աղքատիկ, փոքր տաճար, ուր այդ օրը դրած էր մի հարստահագուստ մեռելի։ Պատարագից յետոյ քահանան ասաց մի բարձրանալով, անպաճոյճ, բայց զգացված խօսքերով պարզեց ժողովրդին ազգային անվանի կորուստը. ըստ ամենայնի քահանան չէին հասկացողութեան եւ զարգացման տէր մարդ էր, նրա կարծիքը հայերին մարդու համոզմունքն էր, ուստի թանգագին ինձ համար։ Շուրջս վչտացած, լուռ դէմքեր, ամբողջ հասարակութիւնը պէս էր։

Թիֆլիս հասայ թաղման միւս օրը եւ չէ յած տեղի ունեցած տխուր դէպքերին, եւ որիթ ունեցայ համոզվելու, թէ ինչ մեծ ազգին կորուստ էր այդ անսպասելի մահը. բոլոր հայաբնակ գաւառների ներկայացուցիչներ խմբված էին այստեղ։ Թիֆլիսը այդ օրերը պատկանում էր գաւառացիներին։

Պետրոս Զաքարեանց

Ալէքսիս, փետրվարի 26

---

*) Ղարիբը լաւ զգում էր այդ սէրը և իզուր չէր իր ուսերից թողնում Արծրունու թանգագին անշունչ դիակը մինչև Խօջիվանքի գերեզմանատունը. ոչ ոք մեզանում չէ արժանացել այդպիսի փառքի և պատիւ։

ՆԵՐՔԻՆ ՀՈՒՐԵՐ

—

Ներքին գործերի մինիստրը հեռագրով տեղեկացրել է Կովկասեան կառավարչապետին, որ թագաւոր Կայսրը բարեհաճեց այս մարտի 18-ին Բարձրագոյն հրամայել,—1) իրաւունք տալ Կովկասեան քաղաքացիական մասի կառավարչապետին տեղն ու տեղը վերջնականապէս լուծել այն բոլոր հարցերը եւ ձեռնարկել այն բոլոր միջոցները, որոնք կապ ունեն Շամախի քաղաքի վերականգնման եւ յունվարի 31-ի երկրաշարժից վնասված գիւղերի կանոնաւորման հետ. 2) առժամանակ դադարեցնել Շամախի քաղաքում 1892 թուականի քաղաքային կանոնադրութեան գործադրութիւնը. 3) վերացնել այժմ այնտեղ գոյութիւն ունեցող քաղաքային հասարակական վարչութիւնը. 4) ժամանակաւորապէս քաղաքային տնտեսական գործերի վարումը յանձնել Շամախու գաւառական ոստիկանական վարչութեան՝ մասնակցութեամբ քաղաքի հասարակութեան կողմից ընտրված երկու դէպուտատների. 5) իրաւունք տալ Կովկասեան քաղաքացիական մասի կառավարչապետին վերականգնել 1902 թուականի քաղաքային կանոնադրութեան գործադրութիւնը Շամախում, երբ այդ բանի ժամանակը հասած կը համարէ նա. եւ 6) ազատել Շամախի քաղաքը 1892 թ. ապրիլի 20-ին պետական խորհրդի կողմից սահմանված եւ Բարձրագոյն հաստատված՝ 3680 բուբլի գումարի տարեկան օժանդակութեան վճարումից գանձարանին ոստիկանութեան պահպանութեան համար եւ զինուորական բնակարանային հարկի ծախքերից՝ ընդունելով ի հաշիւ պետական գանձարանի Շամախու քաղաքային ոստիկանութեան ծախքերը, մինչեւ որ այդտեղ վերականգնվի 1892 թուականի քաղաքային կանոնադրութեան գործադրութիւնը։

—

Մարտի 15-ին, Պետերբուրգի տնտեսագէտների ժողովում Ց. Խաչատրեան կարդաց մի զեկուցում նաւթային արդիւնագործութեան մասին։ Զեկուցողը տալով տեղեկութիւն նաւթային արդիւնաբերութեան ներկայ վիճակի մասին, յայտնեց այն կարծիքը, որ կառավարութիւնը պէտք է ներգործական դեր վերցնէ իր վրա արդիւնաբերութեան գործը կարգաւորելու նպատակով։ Կառավարութիւնը պէտք է չինէ մի շարք նաւթամբարներ Բագուում, Բաթումում, Աստրախանում եւ նրանց մէջ պահէ աւելորդ նաւթը մինչեւ վաճառելը։ Բացի այդ պէտք է իջեցնվի նաւթի ակցիզը, որը այժմ տալիս է պետութեան 22,000 բուբլի։ Ակցիզի իջեցնելը չի վնասի պետական արդիւնքին, որովհետեւ արդիւնաբերութիւնը կը զարգանայ եւ կը լրացնէ պակասը։ Զեկուցումը յարուցել է ջերմ վիճաբանութիւններ։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ հնագիտական ընկերութեան նիստը, որի պարապմունքների մասին մենք յիշել էինք «Մշակի» երէկվայ համարում, կը կայանայ այսօր, կիրակի, մարտի 24-ին, ցերեկվայ ժամի 1-ին առաջին արական կլասիքական գիմնազիայի ուսուցչական սենեակում։ Մուտքը կլուբի կողմից։ Կարողանում ենք մասնակցել եւ կողմնակի անձինք։

—

Մոսկվայի ազնուականութեան պարապների եւ պատգամաւորների ժողովը տալիս է 500 բուբլի տալ Շամախու երկրաշարժից նեղվածների օգտին ազնուականութեան միջոցներից։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ մօտ օրերումս Պետերբուրգում տեղի կունենայ ներքին գործերի եւ ֆինանսների նախարարութիւնների ներկայացուցիչների մասնակցելով ժողովը՝ քաղաքային ինքնավարության գործերի մէջ բնակարան վարձողներին իրաւունք տալու հարցի վերաբերմամբ։ Նախարարների մինիստրութիւնը իր կողմից նշանակեր է համարում բնակարանային հարկը ապագայում յանձնել քաղաքային վարչություններին՝ այն պայմանով սակայն, որ սրանց մի վարձատրութիւն չը պահանջեն գանձելից՝ խմիչքների արքունի մենաւաճառի պատճառով ունեցած կորուստների փոխարէնտական բիւջէտում բնակարանային հարկը բաւական տեղ չէ կազմում եւ ընդհանուր առմամբ այդ եկամուտի գումարը մօտ է այն գումարին, որից զրկվում են քաղաքները խմիչքների պետական մենաւաճառի պատճառով։ Բնակարանային հարկը քաղաքներին յանձնելուց առաջ պետք է պարզվեն այնպիսի հարցեր, ինչպէս է, օրինակ, բնակարանատէրերի համար ցանկալի սահմանի հարցը։ Ի նկատի կայ ընտրութեան իրաւունք տալ այն բնակարանատէրերին, որոնք վճարում են տարեկան 35 բուբլուց ոչ պակաս բնակարանային հարկ։

—

ՄՈՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են. «Մոսկվայում հիւր է եւրոպացի հռչակաւոր դրամատիրուհի Սարա-Եակոն (Եւրոպական Դուքսի տաղանդաւոր արտիստուհին ունի իր սեփական խումբը, որի մէջ մասնակցում են նաեւ Յոսի աշխարհական թատրոնի դերասանները), գովեստաւորութեամբ իր հայրենիքում յայտնի զանազան դերասան Ռ. Կավկասյան։ Խմբի պերտուարը յատկապէս բաղկացած է ազգային պիէսներից։ Սարա-Եակոն երեք գաստրոլ կայացումներ կը տայ տեղիս Միջազգային (Интернаціональный) կոչված թատրոնում։ Ապա կը մեկնէ իր խմբի հետ դէպի Պետերբուրգ։ Հռչակաւոր արտիստուհու առաջին կայացումը կայացաւ մարտի 14-ին։ Խաղացին «Գէյշա» եւ «Կէղա» պիէսները։ Հաւաքը ռուս հասարակութիւնը պահում էր իրան, ինչպէս հարկն է պահել մի հասարակութեան, որ առաջ տեղի են ունենում զանազան անհանգստալի անցքեր եւ անհասկանալի լեզուով ներայայտվում են նրա ոգու համար բոլորովին օտար պատմութիւններ։ Նա ծիծաղում դերասանների դրամատիզմի առաջ, բուռն փահարութիւններով յայտնում էր իր գոհունակութիւնը դերասանների էկվիլիբիստիկայի ելքի ժամանակ։ Բայց եթէ հանդիսականը լրիւ կերպով դիտէր եւրոպացիների խաղը՝ անշուշտ կը նկատէր շատ գծեր, որոնք, այսպէս թէ այնպէս, ցոյց են տալիս եւրոպական բեմական գեղարուեստի բարձր դրութիւնը։ Առաջին պիէսի հետ ինչ-որ մի անհասկանալի բան կար։ Ինչ-որ մի աղքատիկ, փոքր տաճար, ուր այդ օրը դրած էր մի հարստահագուստ մեռելի։ Պատարագից յետոյ քահանան ասաց մի բարձրանալով, անպաճոյճ, բայց զգացված խօսքերով պարզեց ժողովրդին ազգային անվանի կորուստը. ըստ ամենայնի քահանան չէին հասկացողութեան եւ զարգացման տէր մարդ էր, նրա կարծիքը հայերին մարդու համոզմունքն էր, ուստի թանգագին ինձ համար։ Շուրջս վշտացած, լուռ դէմքեր, ամբողջ հասարակութիւնը պէս էր։

Թիֆլիս հասայ թաղման միւս օրը եւ չէ յած տեղի ունեցած տխուր դէպքերին, եւ որիթ ունեցայ համոզվելու, թէ ինչ մեծ ազգին կորուստ էր այդ անսպասելի մահը. բոլոր հայաբնակ գաւառների ներկայացուցիչներ խմբված էին այստեղ։ Թիֆլիսը այդ օրերը պատկանում էր գաւառացիներին։

Պետրոս Զաքարեանց

Ալէքսիս, փետրվարի 26

...ի սիւժէտը վերցրած է եապօնական XVI դարու պատմական կեանքից։ Սադա-Եակօն այդ դերում աւելի քան գեղեցիկ էր. նրա ոգեւորումը աւելի բարձր դրամատիզմը վերջին մահվան տեսարանում մեծ տպաւորութիւն թողեց հասարակութեան վրա։ Դիւցազի դերը տաղանդաւոր կատարեց Օ. Կավկաման։ Թատրոնում բաւական հասարակութիւն կար, որը բուռն ծափահարութիւններով վարձատրեց Սադա-Եակօին։»

—

ՊՇԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Այստեղի մի խումբ տիկիններ եւ օրիորդներ իրանց մէջ վճռել են, որ Նոր տարու, Զրօրհնէքի եւ Զատկական տօներին՝ փոխանակ իրար հիւրասիրելու, այցելութիւններ անելու, ուտել խմելու՝ հանգանակութիւն բաց անել իրանց շրջանում եւ իրանց ոյժի չափ իւրաքանչիւր տարի օգնել աղքատ ընտանիքներին, աշակերտներին, որոնց եւ մի քանիսին թոշակաւոր պահել քաղաքիս երկդասեան ծիսական դպրոցում։ Առ այժմ այդպիսիների թիւը հասնում է 28, որոնք եւ նուիրել են 100 բուբլուց աւելի մի գումար։ Յարատեւութիւն ենք ցանկանում այդ գեղեցիկ գործին»։

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են. «Մարտի 17-ին Բագուի նահանգապետի այստեղից մեկնելու ժամանակ, հայ եւ ռուս ժողովուրդը դիմեց նրան մի գրաւոր բողոքով, կոմիտէի գործունէութեան դէմ։ Բողոքի մէջ նրանք գանգատւում են, որ կոմիտէը անարդար կերպով է բաշխում նուիրատուութիւնները ազգաբնակութեանը եւ խնդրում են նահանգապետից, որ նա ինքն իր հայեցողութեան տակ առնէ նուիրատուութիւնների բաժանման խնդիրը»։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Ինչպէս հաղորդում են տեղական լրագիրները, Մօսկվա է ժամանելու իր խմբով յայտնի հայ դրամատիկական դերասանուհի տիկին Սիրանոյշ։ Հայ թիւրանական ընկերութիւնը խաղալու է տեղիս Охотничій Клубъ»-ում։ Բեկերտուարը բաղկացած է հետեւեալ պիէսներից՝ «Համլէտ», «Մէդէա», «Հայրենական տուն» եւ այլն։ Այնքան ուշուշ են լինում Մօսկվայում հայկական ներկայացումներ, որ տեղիս հայ հասարակութիւնը, հաւատացած ենք, առիթը բաց չի թողնի տեսնելու տաղանդաւոր տիկնոջ եւ նրա թատերի խաղը»։

—

«Մշակի» երէկվայ համարում մտել է մի խոշոր տպագրական սխալ. համարի ճակատին տրված է «կիրակի», մինչդեռ պիտի լինէր «ուրբաթ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բոլոր անգլիական լրագիրները առաջնորդող յօդուածներ են նուիրում նորերումս վախճանված Սէսիլ Ռօդսին, միաձայն խոստովանելով այն մեծ դերը, որ կատարեց հանգուցեալը հարաւային Աֆրիկայում։ Պահպանողական եւ ազատամիտ—իմպերիալիստական լրագիրները գովաբանում են Ռօդսին, որպէս մի գործիչի, որ ընդարձակեց բրիտանական պետութեան սահմանները եւ նպաստեց իմպերիալիստական գաղափարների տարածման անգլիական ժողովրդի մէջ։ Ազատամիտ «Manchester Guardian» յայտնում է, թէ Ռօդս գլխովին նուիրված էր հայրենասիրութեան, բայց այդ հայրենասիրութիւնը սխալ ուղղութեան էր հետեւում։ Խիստ դատավճիռ է կարդում հանգուցեալի վրա արմատական «Star» լրագիրը. «Սէսիլ Ռօդս թաղվեց,—ասում է նա,—իր անսանձ փառասիրութեան աւերակների տակ։ Նրան վիճակվեց տեսնել հարաւային Աֆրիկան քաղաքակրթութեան շինութիւնը քարուքանդ եղած եւ բրիտանական պետութեան գերիշխանութիւնը հիմնովին խախտված։ Այդ երկրում։ Հեշտ է մեռածների մասին միայն խօսելը. բայց, մեր կարծիքով, անհրաժեշտ է խրատական պատասխան տալ այն մարդուն, որը անվերջ փառաբանում են։ Ռօդսին, որպէս իմպերիալիստ հայրենասիրի, անհրաժեշտ է նախազգուշացնել ժողովրդին, ասելով, որ փողը կամ երկիրների ընդարձակումը փառասիրութիւնը դեռ մեծ բան չեն եւ թէ նրանցից դուրս էլ դեռ կայ աշխարհում։ Ռօդս կարծում էր, թէ մարդու կարելի է գնել չէկի դրոյկի միջոցով եւ վատնում էր իր փողերը այնպիսի նպատակներ, որ անօրինակ է անգլիական ազգային պատմութեան մէջ, եւ այդ անում էր ազգի ու ժողովրդի կամի ասպարէզը քաշելու նպատակով։ Որպէս մանաւոր մարդ, նա ունէր շատ լաւ կողմեր, բայց որպէս քաղաքական եւ սոցիալական այժ, նա մի անէծք էր Անգլիայի համար»։

—«Neue Freie Presse» լրագրին հաղորդում են, թէ բուլգարական մինիստր-նախագահ Դանեվի ծրագիրներից մէկն էլ, որ նա տարել է իր հետ Պետերբուրգ, Բուլգարիայի, Սերբիայի եւ Չերնոգորիայի մէջ քաղաքական դաշնակցութիւն հաստատելն է եւ թէ մինիստր-նախագահը ցանկութիւն ունի Ռուսաստանի միջոցով Բուլգարիայի համար ստեղծել առաջնակարգ դիրք այդ դաշնակցութեան մէջ։

—Նոր կազմակերպված միջազգային—քրիստոնէական միութիւնը, որի նպատակն է աշխատել վերջ դնելու անգլո-բուէրական պատերազմին, մօտ օրերումս հրատարակել է մի կոչ, որ ուղղված է եւրոպական պետութիւններին եւ ազգերին։ Կոչի տակ ստորագրել են հոլլանդական եւ գերմանական բազմաթիւ հոգեւորականներ։

—Հաւագայից գրում են «Temps» լրագրին, թէ հոլլանդական կառավարութիւնը դիմել է անգլիական մինիստրութեան եւ թոյլտուութիւն խնդրել սանիտարական խմբեր ուղարկելու հարաւային Աֆրիկա՝ բուէրական զօրաբաժինների բժշկական կարիքները հոգալու համար։ Անգլիական կառավարութիւնը դեռ եւս ոչ մի պատասխան չէ տուել։ Ենթադրում են, որ կառավարութիւնը նախ կամենում է իմանալ Կիտչէնների կարծիքը այդ մասին, նախ քան որ եւ է պատասխան տալը Հոլլանդիային։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Երկաթուղու վագոնում նստած՝ ես երկար ժամանակ գտնվում էի Բագուի տպաւորութիւնների ազդեցութեան տակ։

Ճնշված, սնանկացած Բագուն ինձ վրա աւել ուժեղ տպաւորութիւն գործեց, քան անցեալ տարվայ փարթամ եւ յաղթական Բագուն։

Նաւթային աշխարհը գերել է մարդկանց եւ բեւեռել նրանց իր վրա։

—Ո՞ւր գնանք, հարցնում էին ինձ երիտասարդները։ Կամայ ակամայ պէտք է մնանք այստեղ։

Ո՞ւր գնան։

Այդ հարցը, ճիշդ է, տալիս են միմեանց երիտասարդները, բայց չեն սիրում նրան մանրամասն քննել եւ նրանով լուրջ զբաղվել։

—Ո՞ւր են գնացել ձեր բանուորները, հարցրի ես նրանցից։

—Իրանց գիւղերը, պատասխանեցին ինձ։ Բանուորը քիչ պահանջ ունի եւ ամեն տեղ կարող է իր ձեռքի աշխատանքով ապրել, իսկ մենք...

—Իսկ դուք, կրկնեցի ես։

—Մենք ընդարձակ ասպարէզ չունենք ամեն տեղ, առարկեցին նրանք։

—

Ասպարէզ չունեն։

Միթէ ճիշդ է։

Միթէ աշխատող ինտելիգենտ մարդը մեր երկրում համակրելի, խելացի գործ չի գտնի իր համար։

—Մենք բժիշկ չունենք, աղաղակում են մեր երկրի բոլոր անկիւններից։

—Մենք գիւղատնտեսների աջակցութեան եւ խորհրդին ենք կարօտ, գանգատվում են գիւղերից։

—Մենք պաշտպան-իրաւաբաններ չունենք, որոնք մեզ մատչելի լինէին եւ մեզ օգնէին, գանգատվում են գաւառներից։

—Մենք մարդիկ չունենք տեղական տանուտէրի, գիւղական դատաւորի, գաւառական քաղաքի մէջ գործող ճանաւորի եւ պաշտօնավարների համար, աղաղակում են ամեն տեղից։

—

Նաւթային աշխարհի տպաւորութիւններից յետոյ ինձ մեծ հաճութիւն պատճառեցին երեք գաւառական ձայներ, որոնք խօսում էին մոռացված գործի եւ մոռացված աշխարհի մասին։

—Ի՞նչ ձայներ են եւ ինչ մոռացված աշխարհ, կը հարցնէք դուք։

Ձայներից մէկը Ախալքալաքի գաւառից էր, միւսը Շուշու, իսկ երրորդը Սուրմալուի գաւառից։

Նրանք խօսում էին մեր գիւղական կարիքների մասին։

Ես աչքի առաջ ունեմ այն երեք խոշոր յօդուածները, որոնք վերջին չորս թիվայ ընթացքում տպվեցին «Մշակի» մէջ, այն է

«Գիւղական ցաւերից»։

«Գիրք եւ հող» եւ

«Գիւղական լրագրի կարիքը»։

Առարկան ընդհանուր է, բայց նա լուսաբանված է բոլորովին տարբեր տեսակէտներով։

Ես կը խօսեմ նրանց մասին։

—

—Ո՞վ պէտք է քաղաքագլուխ լինի Թիֆլիսում առաջիկայ քառամեակին։

—Իսկ ո՞վ Բագուում։

—Իսկ ո՞վ Երեւանում, Գանձակում։

—Իսկ ո՞վ գաւառական քաղաքներում՝ Ալէքսանդրոպոլում, Ախալքալաքում, Ախալցխայում եւ ուրիշ քաղաքներում։

Այդ հարցերը հետաքրքրում են շատերին։

Միթէ չը գիտենք որքան մարդիկ են գլուխ պատռում քաղաքագլուխ, քաղաքային վարչութեան անդամ եւ պաշտօնավար լինելու։

Ինքնավարութիւն է՝ հանաք բան չէ։

Ասպարէզ կայ ձայն ունենալու, գործերի վրա ազդելու, պաշտօններ բաժանելու։

Այդպէս է քաղաքներում։

Սակայն ինքնավարութիւն վաղուց գոյութիւն ունի եւ գիւղերում։

Այո, ինքնավարութիւն։

Եւ այնպիսի ինքնավարութիւն, որտեղ իւրաքանչիւր գիւղացի հաւասար ձայն ունի եւ կարող է անմիջապէս մասնակցել բոլոր հասարակական ժողովներին, ընտրել իր համար տանուտէր, դատաւոր եւ ամեն տեսակ գիւղական պաշտօնավարներ։

Որքան գործ եւ արդիւնաւէտ գործ կարող էր կատարել գիւղական ինքնավարութիւնը, եթէ գիւղում լինէին շանիմաց, հասկացող մարդիկ։

Ահա այդ հարցն է գնում առաջին յօդուածը մեր առաջ։

Արդարեւ իւրաքանչիւր գիւղ առանձին եւ մի քանի գիւղեր միացած՝ մի ընդհանուր հասարակութեան անունով կարող էին իսկապէս կերպարանափոխել մեր գաւառական խուլ անկիւնները։

Ա. գիւղում չը կայ դպրոց։

Բ. գիւղի ճանապարհները վատ են եւ անկարելի է սայլ բանեցնել։

Գ. գիւղի կամուրջը խախտվել եւ չէ կառուցվում։

Դ. գիւղի եկեղեցին նորոգութեան կարօտ է։

Ե. գիւղում ճահիճներ են գոյացել, որոնցից առաջանում են հիւանդութիւններ գիւղում։

Զ. գիւղում ջրի մեծ պակասութիւն կայ, իսկ մերձակայ սարի մօտ կայ ջրառատ աղբիւր, որից կարելի էր ջուր բերել գիւղը։

Է. գիւղում վարակիչ հիւանդութիւն է երեւացել, որից տանում է բազմաթիւ զոհեր։

Եւ այլն եւ այլն։

Գիւղական ինքնավարութիւնը, գիւղացիների խելացի, համերաշխ եւ փոխադարձ գործունէութիւնը կարող է հրաշքներ անել, կարող է այդ բոլոր ձախորդութիւնների առաջն առնել, կարող է մի շարք հասարակական բարեփոխութիւններ մտցնել գիւղում։

—

Բագուից շատ բանուորներ վերադարձան իրանց հայրենիքը, իրանց գիւղական տները։

Բագուի դժբաղդութիւնը սթափեցրեց այնտեղ վազող գիւղացիներին։

Սկսեցին այդ գիւղացիները հաշուել, խոշորում մանր մաղել եւ եկան այն եզրակացութեան, որ գիւղումն էլ կարելի է փոքր ի շատէ բաւարար ապրել, եթէ կատարելագործութիւններ մտցվեն արհեստի մէջ, եթէ, օրինակ, հողը աւելի լաւ մշակվի, գործադրվեն լաւ գութաններ եւ ուրիշ գործիքներ, եթէ բուսցնվեն նոր արմտիներ, եթէ աւելի նուրբ եւ մաքուր կերպով մշակվեն արդիւնքները։

Ահա այդ հարցն է գնում երկրորդ յօդուածը։

Եւ նա ահա ինչ է պատասխանում։

«Տուէք գիւղական արդիւնաբերութեան վերաբերեալ հանրամատչելի գրքեր։ Հայ դրագէտներ, թարգմանիչներ, հրատարակիչներ, բաւարարութիւն տուէք այդ արդարացի պահանջին»։

Այդ կոչը նա անում է, լսելով գիւղացիների գանգատները եւ աղերսանքները։

Մենք դրան կաւելացնէինք՝ տուէք գրքեր եւ նրանց հետ միասին գործնական ղեկավարներ, որոնք ցոյց տային գիւղացուն գործնական եւ համոզեցուցիչ կերպով, թէ ինչպէս կարելի է մտցնել այս կամ այն կատարելագործութիւնը, ինչպէս բժշկել այս կամ այն հիւանդութիւնը...

—

—Մեր ձայնը հասցրէք լրագրին։

—Մեր թշուառ կացութեան, մեր զրկանքների, մեր տանջանքների, մեր օրվայ ցաւերի մասին յայտնեցէք լրագիր կարդացողներին։

—Մեր կեղեքողների անունները եւ արարքները հրապարակ հանեցէք։

Ահա այս ձեւով գիւղացիները դիմել են յաճախ երրորդ յօդուածի հեղինակին։

Եւ նա բերում է մի շարք սրտաճմլիկ դէպքեր գիւղական առօրեայ կեանքից։

Գիւղացին իր զրկանքների եւ թշուառութեան մէջ հաւատում է, որ հրապարակումն խօսքը, չարիքի մերկացումը, կարօտեալի պաշտպանութիւնը կարող են դրական հետեւանքներ առաջացնել։

Կեղեքիչը կը զսպվի, հարստահարվողը կը վախենայ պատասխանատուութիւնից։

Կառավարիչը կը սանձահարվի եւ զրկվածի դատը պաշտպաններ կը գտնէ իր համար։

Այդտեղ մի բան բնորոշ է։

Գիւղացին սկսում է հաւատալ մամուլի կոչման եւ գնահատում է մամուլի մերկացումները։

Իսկ մեր ինտելիգենտների եւ դիպլոմաւորների մի մասը շատ կը ցանկանար ճնշել եւ խեղդել մամուլի ձայնը։

Եւ աշխատում է ամեն ոյժով։

—

Գիւղական մասսայի այդ հաւատը դէպի մամուլը եւ գրականութիւնը մի շատ հանկարելի եւ մխիթարական երեւոյթ է։

Դա ժամանակի նորագոյն պատգամներից մէկն է։

Նշանակալից է։

—

Վերջացնեմ իմ խօսքը մի փոքրիկ յիշողութիւնով։

Երկու տարի սրանից առաջ ես առիթ ունեցայ այցելել Ախալքալաքի գաւառը երկրաշարժից յետոյ։

Երկրաշարժից վնասված շրջանում կազմակերպված էր օգնութեան գործը։

Գիւղերում բացվել էին ճաշարաններ եւ կարօտեալներին բաժանվում էր հաց։

Մի յատուկ բժիշկ պատում էր գիւղերը եւ բժշկական օգնութիւն հասցնում հիւանդներին։

Մի ուրիշ բժիշկ հիւանդանոցում խնամում էր վիրաւորվածներին։

Հետազօտողների մի խումբ ցուցակագրում էր գիւղացիներին եւ տեղեկութիւններ ժողովում նրանց կարիքների մասին։

Վարչութիւնը ուշի ուշով հետեւում էր գիւղի կարիքներին եւ խնդրում գիւղերի համար արտօնութիւններ։

Տեղական կոմիտէը մի շարք միջոցներ էր մշակում գիւղացիներին սերմացու տալու նոր ցանքսերի համար, աւելի բարեկարգ եւ ամուր տներ շինելու վնասված գիւղերում...

Գիւղի եւ քաղաքի, գիւղական ժողովրդի եւ ինտելիգենտ ու վարչական մարդկանց մէջ հաստատվել էր մի համերաշխութիւն, փոխադարձ յարգանքի եւ համակրութեան մի մխիթարական զգացմունք։

Գիւղացին սկսել էր հաւատալ ինտելիգենտին։ Ինտելիգենտը ոգեւորված էր գիւղացու համար գործելու գաղափարով։

—

Որքան գործ կայ կատարելու։

Ի՞նչ մեծ ասպարէզ կայ գործելու։

Ո՞ւր էր, թէ մեր երիտասարդութիւնը խոր կերպով զգար, թէ ինչ մեծ եւ գրաւիչ կոչում է վերապահված նրա համար մեր ազգաբնակութեան կեանքի մէջ։

Վրթին

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ։ «Օրէնքների ժողովածուի» մէջ մարտի 22-ից տպված է հոգեւոր վարչութեան իգական դպրոցների նոր կանոնադրութիւնը։

ՏԱՄԲՕՎ։ Նահանգի մի քանի տեղերում սաստկացաւ որովայնային եւ բծաւոր տիֆը, բայց ոչ թէ կիրակրի պակասութիւնից։ Մեռան երկու բժիշկ, վարակվեցին էլի երկու ողորմած քոյրեր եւ մի ֆելդշէր։

ՆՕՎՕԶԷՐԿԱՍԿ։ Գիւղացիների մէջ տարածված է ընդացաւը։

ԼԻԲԱՎԱ։ Այստեղ չոգենաւով բերված է Անգլիայից օրինակելի տաւարի հօտ Մօսկվայի գիւղատնտեսական ընկերութեան համար։

ՎԱՐՇԱՎԱ։ Հէնրիխ Սենկէվիչին տօնախմբող մանաժողովը տպեց հաշիւը։ Յօբելեարի օգտին ժողովվել է 107,000 բուբլի։—Պրուսական կառավարութիւնը թոյլատրում է, որ այս երկրից Գերմանիայի միջով անցնեն գաղթականներ դէպի Ամէրիկա միայն անցագիր ներկայացնելու եւ ոչ պակաս քան 400 մարկ վճարելու պայմանով։

ԽԱՐԿՕՎ։ Հաստատված է կեանքի փոխադարձ ապահովագրութեան առաջին ընկերութեան կանոնադրութիւնը։

ԿԱԶԱՆ։ Հասարակական առողջապահութեան մանաժողովի նիստում քննվում էին միջոցներ խնդացաւի դէմ։ Այդ տարափոխիկ հիւանդութեան զարգացման պատճառը համարվում է միակերպ սննդառութիւնը, բանջարեղէնների պակասութեան պատճառով։ Վճռվեց խորհուրդ տալ նահանգական վարչութեան նպաստել գաւառական զէմստվոներին փոքրիկ հիւանդանոցներ բանալ։

ՈՒՄԿԻԻԲ։ Նոր-Բազարում հաւաքվեցին զինաւորված արնաուտներ՝ բուրգօմիստր Հակիբէյին փոխադրելու դէմ բողոք յայտնելու նպատակով։ Թիւրքաց իշխանութիւնները կարգադրութիւն արին քրիստոնեաների պաշտպանութեան մասին։

ԼՕՆԴՕՆ։ «Daily Chronicle» հաղորդում է, որ Միլներ 3 միլիոն ֆունտ կրէդիտ խնդրեց նոր երկաթուղիներ կառուցանելու համար հարաւային Աֆրիկայում։

ԿՐՕՆՍՏԱԴ։ Դելարէյ եւ Կէմպ մարտի 20-ին գտնվում էին Շտէյնի մօտ։

ՎԻԵՆՆԱ։ «Neue Ereie Presse» լրագրի տեղեկութիւնների համեմատ, Նովօ-Բազարի սանջակում, Կոլէշինի մօտ, տեղի ունեցան արիւնահեղ ընդհարումներ արնաուտների եւ սերբական աւազակախմբերի միջեւ։

ՄՕՍԿՎԱ։ Մամոնտովի գոյքի աճուրդը ընդհատվեց. ստացված է 40,000 բուբլուց աւելի։

ՍՕՖԻԱ։ Կիսապաշտօնական «Բուլգարի» լրագիրը յայտնում է. «Կառավարութիւնը խիստ կը դիմադրէ մակեդոնացիների ապօրինի գործողութիւններին, բայց ոչ մի բուլգարական կառավարութիւն չէ կարող փակել սահմանը այն մակեդոնացիների առաջ, որոնք ապաստան են որոնում»։

ԲԵՐԼԻՆ։ Հէնց նոր աւարտված ստորագրութիւնը ռուսաց փոխառութեան համար ծածկեց փոխառութեան գումարը հարիւր անգամից ա-

ւելի։ Այդ հետեւանքը նրանով աւելի նշանաւոր է, որ օպէրացիան կատարվում էր մի այնպիսի ժամանակ, երբ չուկաների ընդհանուր տարաշրջրութիւնը չատ էլ կենդանի չէր, եւ որ աջողութիւնը ձեռք բերվեց առանց որ եւ է վնասի ռուսական միւս արժէթղթերի համար. ընդհակառակը—այդ կուրսերը աւելի բարձր էին, քան մինչեւ ատորոգրութիւն բանալը։ Վերջին օպէրացիայի այդպիսի խոշոր աջողութիւնը այստեղ ապացոյց են համարում այն հաստատուն դրութեան, որ ռուսական ֆոնդերը վայելում են այնտեղ, եւ բացասական վստահութեան դէպի Ռուսաստանի ֆինանսների այժմեան վարչութիւնը։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչենէրի հեռագիրը հաղորդում է, որ Կիտչենէր մարտի 18-ին հետախուզող զօրաբաժին ուղարկեց գեներալ Գոլտէրի հետ դէպի Գարտու գետը։ Զօրաբաժինը յարձակվեց թշնամական թնդանօթների հետքերի վրա եւ հալածեց բօէրներին, բայց, երբ զօրաբաժինը կանգնեց բաց տեղի վրա, բօէրների մօտ եկած օգնական զօրքերը յարձակվեցին նրա վրա թեւերից։ Սկսվեց մի յամառ կռիւ։ Բօէրները ամեն կողմից յետ մղվեցին։ Դէլարէյ եւ Կէմպ իզուր աշխատում էին համոզել թւով 1500 բօէրներին վերսկսել յարձակումը։ Բօէրները մէկ կորուստ ունեցան. անգլիացիների կորուստները նոյնպէս չատ մեծ են. նրանց մի մասը պաշտպանվում էր, մինչեւ բոլոր մարդիկը սպանվեցին կամ վիրաւորվեցին։

ՊԱՐԻԶ։ «Aurore» լրագրի խօսքով, Վալդէկ-Ռուսսո դիտաւորութիւն ունի հրաժարական տալ իր ամբողջ կաբինէտի հետ միասին ոչ թէ ընտրութիւններից յետոյ, այլ ընտրութիւններից առաջ, ցոյց տալու համար դրանով իր կատարեալ չէզոքութիւնը ընտրութիւնների ընթացքում։

Կ. ՊՕԼԻՍ։ Զմիւռնիայից ստացված տեղեկութիւնների համեմատ, այնտեղ զէնքի են կանչված 6 բատալիոն ըէդիֆներ. դրանցից երկուսը գնում են Սալոնիկի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի 21-ին ճանապարհ ընկաւ Մոսկվա Մեծ Իշխան Սերգիյ Աւէքսանդրովիչ իր Ամուսնու հետ։

23 մարտի

ՐԻԳԱ։ Շամախեցիների օգտին հաւաքված է ընդամենը 2556 ռուբլի։

ԻՐԻՒԵՎ։ Զմիգրոդսկի հին բնակիչը հրատարակեց մի բրոշիւր, որով բացատրում է, թէ Իւրիեվում որտեղ էր բնակվում Ժուկովսկին 1815 թւից մինչեւ 1818 թիւը եւ 1824 թւից մինչեւ 1841 թիւը։

ՊԱՐԻԶ։ Դեսպան իշխան Ուրուսով զինուորական ճաշ տուեց ի պատիւ գեներալ Պուզիրէվսկու։ Ներկայ էին զինուորական վարչութեան բարձր ներկայացուցիչները եւ դեսպանութեան անդամները։ Գեներալ Պուզիրէվսկի այսօր ճանապարհ ընկաւ Վարշավա։

ՕԴԷՍԱ։ Առաւմնաբուժութեան համաժողովում, որը կը կայանայ ներկայ տարի Օդէսայում, կընտրվեն ներկայացուցիչներ Ռուսաստանից միջազգային այն դաշնակցութեան համար, որ հիմնվում է զանազան երկիրների մասնագէտներին միացնելու նպատակով։ Դաշնակցութիւնը հոգ կը տանէ առաւմնաբուժական օգնութիւն կազմակերպելու մասին դպրոցներում եւ զօրքերում եւ աղքատներին օգնութիւն հասցնելու համար։

ԲԵՐԼԻՆ։ Սակսօնական կառավարութիւնը հրատարակեց հրաման, որպէս զի օտարահպատակները, մանաւանդ ռուսները, ընդունվեն սրանից յետոյ Ֆրէյբէրգի լեռնային ակադէմիան այն դէպքում, եթէ նրանք աւարտել են տեխնոլոգիական ինստիտուտը, որովհետեւ նրանց սովորական կրթութիւնը իբր թէ անբաւարար է։

ԱԼԺԻՐ։ Նահանգապետը նախաճաշ տուեց ի պատիւ ռուսական եւ ֆրանսիական նաւատորմերի։ Նախաճաշը չատ սրտագին բնաւորութիւն ունէր։ Կենացներ առաջարկեցին երկու պետութիւնների կառավարիչների, Լուբէյի առաջիկայ ճանապարհորդութեան աջողութեան եւ երկու ազգերի միջեւ աճող միաբանութեան համար։ Կատարվեցին ազգային օրհներգներ։

ԳՐՕԶՆԻ։ Ախվերդովի մօտ բռնկվեցին երեք վիշկաներ. հրգեհը աջողվեց չէզոքացնել։ Հէնց այնտեղ տասերորդ օր է խփում է ֆոնտան, որ տալիս է 200 հազար պուդ նաւթ։—«Торгово-Промышленная Газета» լրագիրը հաղորդում է, որ այս օրերս Պետերբուրգում կը գումարվի խորհրդակցութիւն՝ առաջին իրաւաբանական երկաթուղիական կազմակերպութեան հարցը կազմակերպելու համար։—Մարտի 21-ին Մարշան եւ կապիտան Սօվաժ այցելութիւններ գործեցին արտաքին գործերի մինիստր կոմս Լամզդորֆին, ծովային միսիսարութեան կառավարիչ Տիրտովին եւ ծովային գլխաւոր շտաբի մի հրամանատար Սավէլանին։ Մարտի 22-ին արտաքին գործերի մինիստր կոմս Լամզդորֆ եւ զինուորական մինիստր գեներալ Կուրոպատկին եւ ուրիշները այցելութիւն գործեցին Մարշանին եւ Սօվաժին։ Մարտի 22-ին ֆրանսիական դեսպան Մօնտէբէլլո այցելեց գնդապետ Մարշանին եւ երկար ժամանակ խօսակցեց նրա հետ։ «Медвѣдь» հիւրանոցում ի պատիւ Մարշանի ու Սօվաժի կայացաւ բանկէտ, որ կազմեց ֆրանսիական կօլօնիան։—Ֆրանսիական դեսպան Մօնտէբէլլոի մօտ կայացաւ ընթրիք։—Հրաւիրված էին Մարշան եւ Սօվաժ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԻՍՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ
Երեքշաբթի, մարտի 26-ին
ՇԱՄԱԽՈՒ ԵՐԿՐԱՇԱՐԹԻՑ ՎՆԵՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ
Թատերասէրները կը ներկայացնեն
ԹՈՒՐՔԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ
I
ՎԻԶԻՐ-ԽԱՆ ՍԱՐԱԲ
Կոմեդիա 4 գործող., հեղինակ. Միրզա Ֆատալի Ախունդովի։
II
ԿԸՌԹ-ԿԸՌԹ
Վոդ. 1 գործողութեամբ։
Սկիզբը երեկոյեան 8 ժամին։
1—2 Կարգադրող՝ Մ. Ահմէդ-Խան

ՀՐԱՎԻՐՎՈՒՄ ԵՆ
ԹԱՏԵՐԱՍԷՐՆԵՐ ԵՒ ՍԻՐՈՂՆԵՐ,
որոնք կը ցանկային մասնակցել մի չարք հայկական ձրի ներկայացումների։ Սեզօնը սկսվելու է հոկտեմբերի 1-ից մինչեւ մեծ պասի առաջին չաբաթը։ Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով հայոց դրամատիկ. ընկերութեան անդամ իշխ. Մ. Թումանեանին. Բարիատինսկայա № 8։ Անպայման հարկաւոր է յայտնել հետեւեալ տեղեկութիւնները. 1) անունը եւ ազգանունը, 2) մանրամասն հասցէն եւ 3) մօտաւորապէս ինչ տեսակ դերեր կը ցանկային յանձն առնել։ (կ.) 2—5

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ
Երկուշաբթի, մարտի 25-ին,
ԱՐՄԷՆԵԱՆ
մասնակցութեամբ տեղական դերասանների, երկրորդ դէբիւտի համար, կը տայ
I
ՖՐԻՑԽԷՆ
Ողբերգութիւն մէկ գործողութեամբ, հեղինակութիւն Զուդէրմանի
II
ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱ
Վոդեվիլ 2 գործ., հեղ. Եակօվլեվի
III
ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ
Կոմէդիա մէկ գործ., հեղ. Բանվիլի
Ներկայացմանը կը մասնակցէ պ. Մակարով, որ Լուդովիկոս XI-դի դերը կը կատարէ ռուսերէն։
Սկիզբը ժամի 8½-ին երեկոյեան
Տոմսակները—թատրոնի կասսայում։
1—2

ՀՐԱՒԷՐ
Կիրակի, մարտի 24-ին, ս. պատարագից յետոյ, Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցում լինելու է ծխական ժողով՝ նախկին երէցփոխ պ. Սարգիս Ղամազեանցի հաշիւները քննելու. ուստի խոնարհաբար խնդրում եմ յարգելի ծխականներին ներկայ լինել ժողովին։
Երէցփոխ՝ Խաչատուր Տէր-Մարգարեանց
3—3

Գ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ
ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐԻ
ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ
բաց է Փառքի Տաճարում, ամեն օր, առաւօտեան ժամի 10-ից մինչեւ երեկոյեան ժամի 6-ը։ (կ. չ. ո.) 4—5

Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան
Աշխատանքի Տունը
իր պահեստում ծախու ունի հետեւեալ իրեղէնները եւ առարկաները.
1) Զանազան տեսակ զգեստներ եւ սպիտակեղէններ. 2) Տեղաշոր. 3) Ուռկաններ. 4) Զեմօդաններ. 5) Թղթէ տոպրակներ. 6) Ամեն տեսակ կարտօնի արկղիկներ. 7) Բռնոցներ (ки для пакетовъ). 8) Պակլեա գործարանների եւ չոգենաւերի համար։
Նոյն տեղն ընդունվում են եւ պատուէրներ։ Պատուէրները կատարվում են արագ, նայն ճշդութեամբ եւ չատ չափաւոր գներով։ Ընդունվում են նաեւ կազմարարութեան պատուէրներ։
Հասցէն՝ Баку, Верхне-Григоріевская ул., д. Шредера, близъ пожарной команды, телефонъ № 713. 2—3

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում
վաճառվում են՝
ՄԽԻԹԱՐ՝ պատկերազարդ չքեղ հրատարակութիւն, Վենետիկ, 1901 թ. գ. 2 ր.
ԷՓԻՐԻԿԵԱՆ Հ. Ս., «Գրպանի ատլաս», Բ. տիպ, բազմաթիւ տեղեկութիւններով, Վենետիկ, թ. գ. 1 ր. 75 կ.
ՃՈՒՂՈՒՐԵԱՆ ՑԱՐ. քահ., «Աղքատի հալը», գաւառական կեանք, Թիֆլիս 1902 թ. գ. 25 կ.
ՎՏԱԿ, գրական-բանասիրական ժողովածու, խմբ. Վ. Փափազեանի, Թիֆլ. 1901 թ. գ. 1 ր.
ՄԱՐԻԱ ԿՈՐԵԼԼԻ, «Մի մանկան հոգու պատմութիւն», արդիւնքը «Եղբայրական օգնութեան», ռուս. թարգմ. Տ. Վ. Վղրչ. 1902 թ. գ. 1 ր.
ԱՀԱՐՈՆԵԱՆ Ա., «Պատկերներ», տաճկահայոց վերջին տարիների կեանքից, թուով 10 Մոսկվա գինն է 1 ր։
ՊԱՏԿԱՆԵԱՆ ՌԱՓ. (Գամառ-Քաթիպա), «Ընտիր երկասիրութիւններ», 2 հատոր, անկախ կազմով՝ 4 ր.
» » «Բանաստեղծութիւններ», Գ. տիպ, 50 կ.
ՇԻԼԼԷՐ, 1. «Վիլհէլմ Տէլը»—15 կ., 2. «Օրլէանի կոյսը»—20 կ., թարգմ. Ս. Թառայեանի։
Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (կ) 4—5

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւն
պատիւ ունի յայտնելու նոյն ընկերութեան յարգելի անդամներին, որ կիրակի, մարտի [illegible] լինելու է տարեկան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ վերոյիշեալ ընկերութեան արհեստանոցում, Գ[illegible] կայա փողոց, № 25։
Ընդհանուր ժողովի խորհրդածութեան նիւթը հետեւեալն է.
1) Ապրիլի 15-ի 1901 թ. ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը.
2) Վարչութեան գործունէութեան հաշիւը 1901 թ-ի։
3) Ընկերութեան դրամագլխի տարեկան հաշիւը.
4) 1902 թ-ի նախահաշիւի վաւերացումը.
5) Վարչութեան 3 անդամների եւ փոխանդամների ընտրութիւնը.
6) Վերաստուգիչ յանձնաժողովի անդամների եւ փոխանդամների ընտրութիւնը.
Նոյն օրը, առաւօտեան ժամը 10—12 տեղի կունենայ արհեստանոցի ձեռագործների ճառում։ (մ. 17, 24) 1—2

Պ. Ս. Սմիրնովի Ընկերութիւնը Մոսկվայում
հաղորդում է ի տեղեկութիւն իր յարգելի գնողների, որ բարձր յատկութեան ՍԵՂԱՆԻ [illegible] Կովկասեան բնական ԿՕՆԵԱԿ, օղիներ եւ լիկեօրներ կարելի է գտնել բոլոր խանութներում մեծ քանակութիւններով, Մոսկվայի գներով, աւելացնելով միայն ճանապարհածախսը։ ԵՂ. Բ. ԱԳՐԻԱՆՆԵՐԻ պահեստից, Բագուում, Քալանթարովի պասաժում։
4—20

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ԼԷՕ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում
ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ
XVIII ԴԱՐ
Առաջին մաս
ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՕՊԷԿ
Ծախվում է. հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція Мшака։ «Գուտտենբէրգ» գրաս. Ճառանոցում։ Հասցէն՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенберга“։
Նոյն տեղերում ծախվում են նոյն հեղինակութեան ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ մնացած օրինակները։ Գինը 1 ռուբլի 50 կօպէկ։

ՍՏԱՑԵԼ ԵՆՔ
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ԳԱՐՆԱՆԱՑԻՆ ԵՒ ԱՄԱՌԱՑԻՆ ՍԵԶՕՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
տղամարդկանց, կանանց եւ
երեխաների
ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ
Ընդունում ենք, մեր կտորներից, ամենայն տեսակ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ (ЗАКАЗЫ), որոնք ստացված են արտասահմանեան և ռուսական ամենայն գործարաններից։
Մագազինին կից բացել ենք նոր բաժնունք, բացառապէս կանանց վերնազգեստների համար, կարված ամենավերջին տարազով։
ԳՆԵՐԸ ԱՄԵՆՔԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ
Դիմել՝ եղբ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻՆ
Գոլովինսկի պրոսպէկտ, տուն Քաշվէթեան ս. Գէորգ եկեղեցու, առաջին գիմնազիայի հանդէպ։ 6—20

Дозволено Цензурою, Тифлисъ, 23 Марта 1902 г.
Электропечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.